Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 20-ի N 190-Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
մարտի 29-ի N 364-Ն որոշման

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ, ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց (այսուհետ՝ շահառուներ) տրամադրվող ապաստարանի գործունեությանը, մատուցվող ծառայություններին և անձնակազմին ներկայացվող պահանջները, ինչպես նաև ապաստարանի կողմից ծառայությունների մատուցման կարգը:

2. Ապաստարանի ծառայություններ կարող են տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի համաձայն հավաստագրված այն ոչ առևտրային իրավաբանական անձինք, որոնց հետ սոցիալական հարցերի ոլորտում լիազոր մարմինը կնքել է ֆինանսավորման պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա:

3. Ապաստարան տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, Հայաստանի Հանրապետությունում բնակվող և օրենսդրությամբ սահմանված կարգով բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ինչպես նաև ապաստան հայցող անձանց, եթե առկա է բռնության կրկնման կամ շարունակման վտանգի վերաբերյալ հիմնավոր ենթադրություն:

4. Ապաստարանը գործում է շուրջօրյա և իրականացնում շահառուների տեղավորում: Ապաստարանում չեն կարող տեղավորվել երեխաներ՝ առանց առնվազն մեկ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի:

5. Շահառուներն ապաստարանում տեղավորվում են ոչ ավելի, քան 12 ամսով: Ապաստարանում գտնվելու ժամկետը որոշում է ապաստարանը՝ շահառուներին համապատասխան օգնություն ցույց տվող մասնագետների առաջարկությամբ՝ հաշվի առնելով նրանց անվտանգության համար սպառնալիքների առկայությունը կամ բացակայությունը, նրանց՝ ինքնուրույն կամ այլ անձի հետ համատեղ բնակվելու հնարավորությունը և այլ վերաբերելի հանգամանքներ՝ որպես պարտադիր պայման դիտելով ապաստարանում մնալու՝ շահառուների համաձայնությունը:

6. Շահառուներին ապաստարանով ապահովելու նպատակն այդ անձանց անվտանգությունն ապահովելը և «Սոցիալական աջակցության մասին» օրենքով և սույն հավելվածով նախատեսված սոցիալական այլ ծառայությունները տրամադրելն է:

7. Ապաստարանի գործունեությունը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա՝

1) անվտանգության և պաշտպանության ապահովման առաջնայնություն.

2) խտրականության բացառում.

3) տեղեկացված լինելու իրավունքի երաշխավորում.

4) մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների անձեռնմխելիություն.

5) արժանապատվության, անձնական կյանքի, ինքնուրույնության, ազատ ընտրության և անկախության նկատմամբ հարգանքը.

6) երեխայի լավագույն շահերի առաջնահերթություն.

7) շահառուների աշխատելու և կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը.

8) իրավահավասարություն, մատչելիություն և ներառականություն:

8. Ապաստարանը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը սոցիալական ոլորտում լիազոր մարմնին ապաստարանի ֆինանսավորման պայմանագրով սահմանված ձևաչափով տրամադրում է իր կողմից մատուցված

ծառայությունների վերաբերյալ հաշվետվություն, որը ներառում է տվյալներ շահառուների թվի և նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

2. ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Ապաստարանը պետք է երաշխավորի անվտանգության և ապահովության հետևյալ նվազագույն պահանջները՝

1) շահառուներին ապահովի բնակելի տարածքի անհատույց տրամադրումը.

2) շուրջօրյա անվտանգության ապահովումը՝ ներառյալ անվտանգ մուտքերի, ապաստարանն անվտանգության համակարգով կահավորելը, տեսախցիկների և ապաստարանում անհատական պաշտպանության միջոցների (աերոզոլային սարքեր, ազդարարման համակարգ և այլն) առկայությունը: Արգելվում է տեսախցիկներ տեղադրել շենքի ներսում.

3) գործունեությունն օրենսդրությամբ սահմանված կոմունալ, սանիտարահամաճարակային և հիգիենիկ անվտանգության, հակահրդեհային և շինարարական նորմերին և կանոններին համապատասխան վարելը:

10. Ապաստարանը պետք է երաշխավորի գաղտնիության հետևյալ նվազագույն պահանջները՝

1) ապաստարանի գտնվելու վայրի և անձնակազմի գաղտնիությունը: Ապաստարանի մուտքերը մշտապես պետք է փակ (կողպված) լինեն, պետք է գործեն ապաստարանի աշխատակից չհանդիսացող անձանց մուտքերը բացառող կարգեր.

2) շահառուներին վերաբերող ցանկացած տեղեկության գաղտնիությունը.

3) գաղտնիության պահպանման գործող կառուցակարգեր (անձնակազմի, շահառուների և ներգրավված բոլոր անձանց հետ կնքելով գաղտնիության համաձայնագրեր):

11. Ապաստարանը պետք է երաշխավորի ապրելու համար հետևյալ նվազագույն պահանջները՝

1) շահառուին և նրա երեխային առնվազն մեկ սենյակի հատկացում, երկու և ավելի երեխաների պարագայում՝ հնարավորության դեպքում լրացուցիչ սենյակի տրամադրում.

2) ապաստարանում երեքից ավելի բնակելի սենյակների դեպքում՝ պետք է լինի առնվազն երկու սանհանգույց.

3) ապաստարանը պետք է ունենա երեխաների դասապատրաստման համար անհրաժեշտ կահավորմամբ և պիտույքներով տարածություն.

4) ապաստարանը պետք է ունենա բավարար բնական և արհեստական լուսավորություն և օդափոխություն.

5) ապաստարանը պետք է ունենա առաջին օգնության դեղորայք և պարագաներ. դրանք և շահառուի պարագաները պետք է մշտապես փակ լինեն և գտնվեն ապաստարանի աշխատակցի սենյակում.

6) ապաստարանը պետք է ունենա չհրկիզվող պահարան շահառուների համար կարևոր իրերի պահպանման համար.

7) ապաստարանը շահառուներին պետք է տրամադրի՝

ա. հագուստի պահարան և մահճակալ,

բ. անկողնային պարագաներ,

գ. խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ, սնունդ պատրաստելու սպասք և այլն),

դ. հագուստ (անհրաժեշտության դեպքում),

ե. անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ, տակդիրներ, միջադիրներ և այլն),

զ. սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ (շահառուն սնունդը կարող է պատրաստել ինքնուրույն),

է. անհրաժեշտության դեպքում՝ երեխաների խնամքի պարագաներ՝ իր տարիքին համապատասխան,

ը. տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ երեխայի համար մանկական մահճակալ,

թ. երեխայի տարիքին համապատասխան զբաղվածության իրեր, խաղեր, գրքեր և այլն:

12. Ապաստարանը շահառուների իրավունքների իրացման համար պետք է ապահովի հետևյալ նվազագույն պահանջները՝

1) ապաստարանը պետք է մատչելի լինի կանանց և երեխաների համար՝ բացառելով խտրականությունը.

2) ապաստարանը պետք է երաշխավորի շահառուին հասկանալի լեզվով՝ այդ թվում ժեստերի լեզվով, տեղեկատվության տրամադրումը.

3) հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովեն օրենսդրությամբ սահմանված ֆիզիկական միջավայրին (ներառյալ՝ ընդհանուր օգտագործման տարածքները, սանհանգույցը, խոհանոցը, տարհանման ուղիները) և տրանսպորտին (առկայության դեպքում) ներկայացվող չափանիշները (ստանդարտները), օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովեն խելամիտ հարմարեցումներ.

4) ապաստարանը պետք է ապահովի աշխատակազմի՝ հավասարության և խտրականության բացառման վերաբերյալ կրթությունը և իրազեկվածության բարձրացումը.

5) շահառուները պետք է տեղեկացված լինեն ապաստարանի և իրենց իրավունքների իրացման հնարավորության մասին, ներառյալ ապաստարանի քաղաքականության, ընդունված կանոնների և հասանելի ծառայությունների մասին.

6) շահառուները պետք է ազատ լինեն իրենց վերաբերյալ որոշումներ կայացնելու՝ առանց հարկադրանքի և պետք է ստանան իրենց ընտրությունն իրացնելու աջակցություն՝ առանց այլ անձանց իրավունքների խախտման.

7) շահառուների իրավունքների իրացումը՝ այդ թվում կրթություն ստանալու, աշխատանքի և այլն, պետք է երաշխավորվի, այդ թվում՝ պետք է ապահովվի երեխաների կրթության շարունակականությունը՝ հեռավար կամ առկա՝ ըստ հնարավորության.

8) շահառուների համար պետք է հասանելի լինի ներքին գաղտնի գործընթաց՝ անձնակազմի, ապաստարանի պայմանների կամ ծառայությունների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու համար:

13. Ապաստարանը շահառուներին, ըստ կարիքի, տրամադրում է օգնության հետևյալ ձևերը՝

1) հոգեբանական օգնություն.

2) իրավաբանական օգնություն, որը ներառում է՝ խորհրդատվություն՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում՝ ներառյալ իրավաբանական տեղեկատվության տրամադրում, ներկայացուցչություն կամ պաշտպանություն՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով, այլ աջակցություն՝ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, փաստաթղթերի վերականգնման կամ դրանց բացակայության դեպքում դրանց ձեռքբերման համար.

3) սոցիալական աջակցություն՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների.

4) անհրաժեշտության դեպքում և շահառուների համաձայնությամբ նրանց կողմից առողջապահական հաստատություններ դիմելու աջակցություն՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար:

3. ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Ապաստարանի անձնակազմը պետք է բավարարի հետևյալ ընդհանուր պահանջներին՝

1) ապաստարանի անձնակազմը պետք է ունենա բավարար պատրաստվածություն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց՝ այդ թվում երեխաների հետ աշխատելու համար.

2) ապաստարանն իր շուրջօրյա աշխատանքի կազմակերպման համար պետք է ունենա առնվազն չորս շուրջօրյա աշխատողներ՝ հերթափոխությամբ, ինչպես նաև 15-րդ կետով նախատեսված աշխատողներ: Օրվա հերթապահ աշխատակիցը

կարիքի դեպքում պետք է նաև աջակցի երեխաների զբաղվածության կազմակերպմանը.

3) անձնակազմը պետք է տարեկան առնվազն 20 ժամ վերապատրաստում անցնի: Վերապատրաստման դասընթացները, ի թիվս այլնի, ընդգրկում են առաջին բժշկական օգնության, ինքնապաշտպանության, հատուկ կարիքներ ունեցող անձանց խնամքի, շահառուների կարիքների գնահատման թեմաները:

15. Ապաստարանի անձնակազմը ներառում է հետևյալ աշխատողներին՝

1) հոգեբան՝ «հոգեբանություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձ.

2) սոցիալական աշխատող՝

ա. սոցիալական աշխատանքի բարձրագույն կրթություն ունեցող և օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստագրված անձ,

բ. այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող, «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած և օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստագրված անձ կամ,

գ. հոգեբանություն, սոցիալական մանկավարժություն, հատուկ մանկավարժություն, սոցիոլոգիա, մարդկային ռեսուրսների կառավարման բարձրագույն կրթություն ունեցող, «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացն ավարտած, համապատասխան վկայական ստացած և օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստագրված անձ.

3) իրավաբան՝ «իրավագիտություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձ: Անձնակազմը կարող է չներառել իրավաբանի, եթե ապաստարանը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի հետ:

16. Ապաստարանի աշխատակից չի կարող լինել այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված չէ.

2) ով դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 22-27-րդ, 29-րդ, 34-35-րդ գլուխներով և 203-206-րդ, 208-209-րդ և 485-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից.

3) ում նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ մտած նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում.

4) ով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

17. Ապաստարանը պետք է անձնակազմի համար առանձին սենյակ հատկացնի:

4. ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Ապաստարանի աշխատակիցը պետք է շահառուին ընդունելու պահից մեկից երեք օրվա ընթացքում իրականացնի վերջինիս կարիքների և վտանգի գրավոր գնահատումը: Տվյալ աշխատակիցը հանդիսանում է այդ գործի վարման պատասխանատուն:

19. Շահառուի գնահատումը պետք է ներառի տեղեկություններ՝

1) շահառուի, նրա առողջական վիճակի և կարիքների վերաբերյալ.

2) շահառուի երեխաների վերաբերյալ.

3) շահառուի կողմից վստահելի անձանց և նրանց հետ կապ հաստատելու միջոցների վերաբերյալ.

4) բռնության նկարագրի և վտանգի գնահատման վերաբերյալ.

5) բնակարանային հարցերի (առկայության, պայմանների) վերաբերյալ.

6) շահառուին տրամադրվող օգնության ձևերի վերաբերյալ.

7) շահառուի կրթության, զբաղվածության, հնարավոր վերապատրաստումների վերաբերյալ:

20. Ապաստարանը շահառուին ընդունելու պահից պետք է իրականացնի՝

1) հրատապ անհրաժեշտության իրերի և օգնության տրամադրում.

2) տրամադրի բավարար տեղեկատվություն ապաստարանի, իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ներառյալ ապաստարանի քաղաքականության, ընդունված կանոնների և հասանելի ծառայությունների մասին՝ տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթերը.

3) շահառուի հետ գաղտնիության համաձայնագրի կնքում առ այն, որ վերջինս պարտավորվում է գաղտնի պահել և որևէ մեկին չբացահայտել ապաստարանի, դրա աշխատակիցների և շահառուների հետ կապված ցանկացած տեղեկատվություն.

4) ըստ կարիքի, տրամադրի սույն հավելվածի 13-րդ կետով նախատեսված օգնություն.

5) շահառուի կարճաժամկետ և երկարաժամկետ սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի մշակում և ներկայացում վերջինիս.

6) շահառուների անվտանգության երաշխավորմանն ուղղված այլ գործողություններ:

21. Ապաստարանը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան ներքին կարգապահական կանոններ:

22. Ապաստարանը պետք է ունենա անձնակազմի, ապաստարանի պայմանների կամ ծառայությունների վերաբերյալ անանուն դիմումներ ներկայացնելու և դրանց համապատասխան ընթացք տալու կարգավորումներ:

23. Ապաստարանը պետք է հաստատի և իր գործունեության մեջ կիրառի հետևյալ փաստաթղթերը՝

1) գաղտնիության պահպանման համաձայնագրեր.

2) անձնական տվյալների ստացման և մշակման համաձայնություն.

3) ապաստարանում բնակության համաձայնագիր.

4) շահառուին տրամադրվող օգնությունը ստանալու համաձայնագիր.

5) շահառուի վստահելի անձանց հետ կապի հաստատման համար համաձայնագիր.

6) դեղորայքից օգտվելու համաձայնագիր.

7) շահառուի կողմից լրացվելու համար՝ ապաստարանից հեռանալու նշումների վերաբերյալ փաստաթուղթ։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ